



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ  
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

“ 02 ” 03 2023 թ.

N 421-Շ

ք. Երևան

**«ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ-ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ»  
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշման 13-րդ կետի ա ենթակետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել 2023 թվականի «Մասնագետների պատրաստման բարձրագույն ուսումնական հաստատություններ-մասնավոր հատված համագործակցություն» ծրագրի 1-ին քաղաղրիչը՝ համաձայն Հավելված 1-ի:

2. Հաստատել 2023 թվականի «Մասնագետների պատրաստման բարձրագույն ուսումնական հաստատություններ-մասնավոր հատված համագործակցություն տեխնոլոգիական ճամբար (TECH-CAMP) 2023» ծրագրի 2-րդ քաղաղրիչը՝ համաձայն Հավելված 2-ի:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանին:

**ՌՈՐԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**«ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ-ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ»  
ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ԲԱՂԱԴՐԻՉ**

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1. Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիական և տեղեկատվական հասարակության կայացմանն աջակցելու նպատակով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) 2020-2022 թվականներին իրականացրել է «Մասնագետների պատրաստման բարձրագույն ուսումնական հաստատություններ-մասնավոր հատված համագործակցություն» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի շրջանակներում նոր տեխնոլոգիական կենտրոնների/լաբորատորիաների ստեղծմանն ու զարգացմանը, ինչպես նաև արդեն իսկ գոյություն ունեցող կենտրոնների արդյունավետ գործունեության ապահովման նպատակով բավարար տեխնոլոգիական և մարդկային ռեսուրսներ ներգրավելու համար Երևանում, ՀՀ մարզերում և Արցախում պատրաստվել կամ վերապատրաստվել է ավելի քան 8800 մասնագետ, իսկ շուրջ 90 մասնագետ հնարավորություն է ստացել գործնական պրակտիկա անցնել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններում:

Դասընթացներն իրականացվել են առցանց և լսարանային դասավանդման միջոցով:

Ոլորտի զարգացման տրամաբանական շարունակականությունն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել զարգացնել մասնագետների գիտելիքներն ու հմտությունները՝ դրանք համապատասխանեցնելով աշխատանքի շուկայի պահանջներին՝ միևնույն ժամանակ ապահովելով տեխնոլոգիաների ոլորտում մասնագետների մեծ հոսք, ինչը հնարավորություն կստեղծի պատրաստել պահանջված մասնագետներ՝ զարգացնելով տեխնոլոգիական արդյունաբերությունը:

Միջոցառման իրականացման համար 2023 թվականին ՀՀ պետական բյուջեով հատկացվել/հաստատվել է 280,000.0 հազար դրամ, որի արդյունքում նախատեսվում է իրականացնել շուրջ 1750 մասնագետի ուսուցում ք. Երևանում և ՀՀ մարզերում, ինչպես նաև նույն մասնագետներին հնարավորություն ընձեռել աշխատանք գտնել բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններում: Ծրագրի իրականացումը ըստ էության

բխում է ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ որդեգրած քաղաքականությունից՝ Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական և արդյունաբերական երկիր:

Ծրագրի իրականացման արդյունքում կձևավորվեն բարձր տեխնոլոգիաների ոլորտում զարգացած և մրցունակ մասնագետներ, ինչպես նաև վերամասնագիտացված մասնագետները հնարավորություն կունենան մուտք գործել տեխնոլոգիական ոլորտ՝ ապահովելով արագ արձագանք ոլորտի արդի պահանջներին:

Կարևորելով բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը թե՛ որպես առանձին ոլորտ և թե՛ որպես Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր առաջընթացի, երկրի կենսամակարդակի բարձրացման և համաշխարհային տնտեսության մեջ մրցունակություն ապահովելու հիմնական խթան՝ ՀՀ կառավարությունը կարևորում է բարձր տեխնոլոգիական ոլորտի շարունակական աճը, տնտեսության այլ բնագավառներում ոլորտի արտադրանքի և ծառայությունների կիրառումը:

ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշման հավելվածի «Տնտեսություն» գլխի 2.3 կետի համաձայն՝ ՀՀ կառավարությունը նպատակադրվել է Հայաստանի Հանրապետությունը դարձնել բարձր տեխնոլոգիական արդյունաբերական երկիր, իսկ ՀՀ կառավարության 2021թ. նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշման Հավելված 1-ով բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտը հայտարարվել է Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը, որի զարգացումը սկզբունքային ներդրում է ունենալու գիտելիքահեն տնտեսությանն անցնելու գործընթացում:

Բարձր տեխնոլոգիական ոլորտում այսօր իրականացվող ծրագրերը մեծապես նպաստում են Հայաստանի Հանրապետության տնտեսության արտադրողականության և մրցունակության բարձրացմանը, մեծ հավելյալ արժեք ապահովող աշխատատեղերի ստեղծմանը, գիտելիքահեն տնտեսության ձևավորմանն ու զարգացմանը, օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, տեղական ընկերությունների արտադրանքի և ծառայությունների արտահանմանն ու համաշխարհային շուկայում Հայաստանի՝ որպես զարգացած տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների ոլորտ ունեցող երկրի վարկանիշի բարձրացմանը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի սկսնակ ընկերությունների ձևավորումը և նոր աշխատատեղերի ստեղծումը խթանելու նպատակով իրականացվում են բազմակողմ ծրագրեր՝ կրթական, գիտական, բիզնես և այլ ուղղություններով:

## **2. ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

2. Նախարարության ռազմավարական նպատակներն են շուկայի պահանջներին բավարարող մասնագետների մշտական հոսքի ապահովումը, տեխնոլոգիական ոլորտում մասնագետների վերապատրաստման կարիքների ուսումնասիրումը, կադրերի վերապատրաստման համապատասխան ծրագրի մշակումը և վերապատրաստման դասընթացների իրականացումը:

3. Հանդիպումներ են կազմակերպվել ոլորտի մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Քննարկվել են Ծրագրի շրջանակում դասընթացների կազմակերպման հեռանկարներն ու համագործակցության եզրերը:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում արձանագրվել են Ծրագրի լուծմանը նպատակաուղղված խնդիրները:

1) Համաձայն Նախարարության ծրագրերի վարչության կողմից հավաքագրված տվյալների՝ ներկայիս ՀՀ ԲՏ շուկան ունի մեծաքանակ մասնագետների պահանջարկ, սակայն նրանց հավաքագրման հետ առկա են խնդիրներ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ուսումնական կենտրոնների և բուհ-երի իրականացրած կրթական ծրագրերը ոչ միշտ են համապատասխանում շուկայի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է ստեղծել պայմաններ, որպեսզի ոլորտի կրթական և գործատու կազմակերպությունների միջև ստեղծվի ներդաշնակ կապ, իսկ ուսումնական գործընթացներն անցած անձինք դասընթացների ավարտից հետո կարողանան հեշտությամբ աշխատանք գտնել բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններում:

2) 2020 թվականին տեղի ունեցած Արցախյան 2-րդ պատերազմի թողած հետևանքները վճռորոշ են դարձնում գիտատեխնիկական առաջընթացի ապահովման և նեղ ոլորտային մասնագետների որակավորման բարձրացման անհրաժեշտությունը:

## **3. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

4. Ծրագրի իրականացման հիմնական նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիական ոլորտի մասնագետների պատրաստմանը և վերապատրաստմանը:

Վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով մշակվել է «Մասնագետների պատրաստման բարձրագույն ուսումնական հաստատություններ-մասնավոր հատված համագործակցություն» ծրագիրը: Ծրագրով նախատեսվում է.

1) Նպաստել Հայաստանում բուհ-մասնավոր հատված համագործակցությանը, աջակցել բուհ-մասնավոր երկխոսության կայացմանը՝ նպաստելով կրթական ծրագրերի՝ քիզնեսի պահանջներին համապատասխանեցմանը: Արդյունքում բարձր տեխնոլոգիաների ոլորտի քիզնես շրջանակը կկարողանա օպերատիվ աշխատել կրթական կառույցների հետ և արագ լրացնել կադրային բացերը:

2) Երևանում և ՀՀ մարզերում համապատասխան որակներով մասնագետներ կրթելը կնպաստի նոր տեխնոլոգիական կենտրոնների/լաբորատորիաների ստեղծմանն ու զարգացմանը, ինչպես նաև արդեն իսկ գոյություն ունեցող կենտրոնների արդյունավետ գործունեության ապահովմանը՝ ներգրավելով բավարար տեխնոլոգիական և մարդկային ռեսուրսներ:

#### 4. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

5. Ծրագրի նպատակներին հասնելու համար նախատեսվում է Հանրապետության ողջ տարածքում իրականացնել ոլորտի շուրջ 1750 մասնագետի ուսուցման և վերապատրաստման համար նախատեսված ծրագրավորում կամ ինժեներություն ուղղություններով դասընթացներ:

6. 2023թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված է 280,000 հազար դրամ:

7. Մրցույթին մասնակցելու նպատակով կրթական կազմակերպությունները հայտով Նախարարություն են ներկայացնում Բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններից՝ գործատուներից, ստացված մասնագետների պահանջարկի վերաբերյալ տեղեկատվությունը՝ պարտադիր նշելով պահանջվող մասնագետների թիվը, մասնագիտությունները և պահանջվող մասնագետների մասնագիտական մակարդակը, ինչպես նաև գործատու կազմակերպության կամ կազմակերպությունների անվանումները և նախատեսվող նվազագույն աշխատավարձի չափը՝ համաձայն Ձև 4-ի, բայց ոչ ավել, քան 25 մասնագետի յուրաքանչյուր ուղղությամբ:

8. Արդեն իսկ աշխատող մասնակիցների ուսուցման/վերապատրաստման դեպքում կրթական կազմակերպությունները Նախարարությանը տրամադրում են նաև տվյալ մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն՝ նշելով վերջիններիս մասնագիտությունը, ինչպես նաև մասնագիտական մակարդակը՝ համաձայն Ձև 5-ի բայց ոչ ավել, քան 25 մասնագետի յուրաքանչյուր ուղղությամբ:

9. Ծրագրի 7-րդ և 8-րդ կետերով պահանջվող տեղեկատվությունը Նախարարություն է ներկայացվում տեղեկանքի ձևով՝ ստորագրված և կնքված կրթական և գործատու

կազմակերպության կամ կազմակերպությունների կողմից՝ միևնույն ժամանակ կցելով երկու կողմերի կողմից համաձայնեցված կրթական ծրագիր:

10. Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունը/ կազմակերպությունները Նախարարության հետ պայմանագիր կնքելուց հետո 1 ամսվա ընթացքում իրականացնում են դասընթացների մասնակիցների հավաքագրում և սկսում են ուսումնական գործընթացը:

11. Դասընթացի մասնակիցների համալրում և/կամ փոխարինում կրթական կազմակերպությունը կարող է իրականացնել դասընթացի մեկնարկից ոչ ուշ քան 1 ամսվա ընթացքում՝ 1-օրյա ժամկետում Նախարարությանը տրամադրելով տեղեկատվություն համալրվող և/կամ փոխարինվող մասնակիցների վերաբերյալ:

12. Դասընթացների ավարտից հետո 1-ամսյա ժամկետում կրթական կազմակերպությունները Նախարարություն են ներկայացնում իրենց կրթական ծրագիրն ավարտելուց հետո տվյալ մասնագիտացմամբ աշխատանքի անցած կամ աշխատանքային առաջընթաց գրանցած մասնակիցների տվյալները՝ կցելով մասնակիցների աշխատանքային պայմանագրերը, որոնց գործողության ժամկետը առնվազն 6 ամիս է:

13. Այն դեպքում, երբ Ծրագրով դասընթացներն անցած և աշխատանքի ընդունված մասնագետը որոշում է կայացնում աշխատանքի անցնել այլ կազմակերպությունում՝ ապա նախկին աշխատանքից դուրս գալու և նոր աշխատանքի ընդունվելու միջև ընկած ժամանակահատվածը չի կարող գերազանցել 10 աշխատանքային օրը: Այս դեպքում կրթական կազմակերպությունը ևս Նախարարություն է ներկայացնում մասնակցի նոր աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև փաստաթուղթ նախկին աշխատավայրից դուրս գալու պատճառների (հնարավորության դեպքում) և ժամկետի վերաբերյալ: Ընդ որում, Ծրագրի մասնակիցը կարող է այլ կազմակերպությունում աշխատանքի անցնել միայն իր նախկին գրադեցրած պաշտոնին համարժեք կամ ավելի բարձր պաշտոնում՝ ծրագրավորում և/կամ ինժեներություն մասնագիտությամբ և Ծրագրի գործողության ժամանակահատվածում ոչ ավել, քան 2 անգամ՝ նախապես տեղեկացնելով կրթական կազմակերպությանը իր՝ աշխատանքը փոխելու որոշման մասին, ինչպես նաև նոր աշխատանքի անցնելուց առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Ծրագրի իրականացման ընթացքում աշխատանքի վայրը փոխելու դեպքում, աշխատանքի ընդունված մասնագետի կողմից ներկայացված աշխատանքային պայմանագրերի ժամկետների հանրագումարը չի կարող պակաս լինել 6 ամսից:

14. Ֆինանսավորումը տրամադրվում է ըստ կրթական կազմակերպության կողմից ներկայացված դասընթացի արժեքի, սակայն ոչ ավել, քան 200,000 ՀՀ դրամ՝ 1 մասնակցի համար: Ֆինանսավորումը տրամադրվում է փուլ առ փուլ՝ ըստ ստորև ներկայացված աղյուսակ 1-ի:

Եթե կազմակերպությունների կողմից 1 մասնակցի համար ներկայացված դասընթացի արժեքը գերազանցում է 200,000 ՀՀ դրամը, ապա Աղյուսակ 1-ում նշված ֆինանսավորման համամասնությունները հաշվարկվում են հաշվի առնելով ֆինանսավորման առավելագույն չափը՝ 200,000 ՀՀ դրամը:

15. Դասընթացի արժեքի և սույն գլխի 10-րդ կետում նշված գումարի տարբերությունը վճարում է ուսանողը, բացառությամբ ՀՀ-ում և Արցախում տեղի ունեցած մարտական գործողությունների մասնակիցների, ում համար դասընթացները կլինեն անվճար: Վերոնշյալ գումարի տարբերությունն այս դեպքում ուսանողի փոխարեն հատուցում է կրթական կազմակերպությունը:

16. Սույն ծրագրի աղյուսակ 1-ի 1-ին կետով նախատեսված գումարի 50 տոկոսը կրթական կազմակերպության կողմից ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջե սույն գլխի 6-9-րդ կետերով նախատեսված դրույթների չիրականացման դեպքում՝ նախարարության և կրթական կազմակերպության միջև վերահաշվարկ կատարելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

17՝ Ծրագրի աղյուսակ 1-ի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված գումարների հանրագումարի 50 տոկոսը կրթական կազմակերպության կողմից ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջե, եթե դասընթացն անցած մասնագետը դասընթացի արդյունքում ստացած մասնագիտությամբ չի աշխատել առնվազն 6 ամիս՝ Ծրագրով նախատեսված դրույթներին համապատասխան՝ նախարարության և կրթական կազմակերպության միջև վերահաշվարկ կատարելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

18. Ծրագրի շրջանակներում ֆինանսավորում տրամադրվում է միայն սույն գլխի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված՝ կրթական կազմակերպությունների կողմից ներկայացված պահանջվող մասնագետների համար:

Աղյուսակ 1

1.	Կազմակերպության հետ դրամաշնորհային պայմանագիր կնքելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում	20%
----	--	-----

2.	Դասընթացի մասնակցի/ մասնակիցների աշխատանքային պայմանագրերը Նախարարությանը տրամադրվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:	60%
3.	Դասընթացի մասնակցի/ մասնակիցների աշխատանքի վերաբերյալ 6 ամիսների հաշվետվությունը Նախարարության կողմից ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:	20%

### 5. ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

19. Ծրագրի շահառուներն են՝

1) ԲՏ ոլորտի աշխատող մասնագետներ,

2) ՀՀ-ում և Արցախում տեղի ունեցած մարտական գործողությունների մասնակիցներ (ընդունելության կարգն անցած բոլոր մասնակիցների համար բոլոր բաղադրիչների դասընթացները կլինեն անվճար:

3) Ցանկացած անձ, ով կտիրապետի ծրագրի մասնակցության համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներին:

20. Ծրագրի իրականացման **արդյունքում** նախատեսվում է աջակցել Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիական և տեղեկատվական հասարակության կայացմանը, աջակցել 2020 թվականի Արցախյան պատերազմի և Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանը, ինչպես նաև Հայաստանի, որպես գիտելիքահեն տնտեսություն, առաջատար դիրքի ձևավորմանը տարածաշրջանում և աշխարհում: Իսկ մայրաքաղաքում և ՀՀ մարզերում կունենանք ավելի բարձր մակարդակի **մասնագիտական որակավորում** ստացած շուրջ 1750 մասնագետ:

### 6. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

21. Մրցույթում հաղթող ճանաչվելու արդյունքում Նախարարության հետ պայմանագիր կնքվելուց հետո 1 ամսվա ընթացքում կազմակերպությունները իրականացնում են ուսանողների հավաքագրումը:

22. Դասընթացների մեկնարկը տրվում է հավաքագրման ավարտից առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում:

23. Դասընթացներն իրականացնող կազմակերպությունները դասընթացների ընթացքի վերաբերյալ Նախարարություն ներկայացնում են հաշվետվություն դասընթացի ընթացքի մասին, որը պարտադիր պարունակում է տեղեկատվություն դասընթացի մասնակիցների թվի



վերաբերյալ՝ ըստ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի՝ համաձայն Ձև 2-ի՝ ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը և վերջին աշխատանքային օրը:

### 7. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

24. Շահառուների հայտերի ընդունման համար ստեղծվել է հարթակ (edu.hti.am), որում կատարվել է հայտադիմումների լրացումն ու հաստատումը՝ ըստ դասընթացների և ուղղությունների: Կայքի/հարթակի սեփականատերը Նախարարությունն է:

25. Ծրագրի իրականացման ընթացքում հաշվի են առնվելու համաչափության, ներառականության, թափանցիկության ու հաշվետվողականության սկզբունքները:

### 8. ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

26. Ֆինանսական ծախսերի արդյունավետությունը գնահատելու համար ներկայացվելու է ընթացիկ աշխատանքների մասին հաշվետվություն, մասնավորապես **ընդունված, սովորող և ավարտած մասնակիցների թվի վերաբերյալ** ըստ ուղղությունների՝ ապահովելու տվյալների հստակ դինամիկա, թափանցիկություն և արդյունավետության չափելիություն: Ծրագրի ընթացիկ վերահսկողության համար ստեղծվելու են Նախարարության ստորաբաժանումներից կազմված մոնիտորինգային խմբեր:

27. Ծրագիր ավարտին Նախարարություն է ներկայացվելու՝

1) 2023 թվականի ամփոփիչ կատարողական հաշվետվություն համաձայն Ձև 3-ի:

2) 2023 թվականի եկամուտների և ծախսերի մասին ամփոփիչ հաշվետվություն կցելով հավաստող փաստաթղթերը համաձայն Ձև 1-ի:

### 9. ԾՐԱԳՐԻ ԱՁԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (IMPACT)

28. Կարևորելով քաղաքացիների առջև հաշվետվողականության սկզբունքը՝ ծրագրի դրամաշնորհի չափանիշները նախատեսվել են այնպես, որ դրանց օգնությամբ հնարավոր լինի գնահատել և չափել ՀՀ կառավարության տվյալ ներդրման ազդեցությունը ՀՀ տնտեսության, գիտության, կրթության և այլ ոլորտների վրա՝ կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում:

29. Ծրագրի վերլուծությունը իրականանալու է հետևյալ հիմնական չափանիշներով՝ շահառուների զարգացման դինամիկա ըստ ուղղությունների և պահանջարկի, հաջողություն (success stories), արդյունավետություն, ծրագրի ընդհանուր/գերակա ազդեցություն:

Ձև 1

<b>2023 թվականի եկամուտների և ծախսերի մասին</b> (Ներկայացնել կատարողական ամփոփիչ հաշվետվության ժամանակ՝ կցելով հավաստող փաստաթղթերը)	
---	--

Հ/հ	Ցուցանիշների անվանում		Ընդամենը
<b>I</b>	<b>Եկամուտներ՝</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
	այդ թվում՝		
-	Հիմնական գործունեությունից		0.0
-	Այլ եկամուտ (պետական բյուջեից)		0.0
<b>II</b>	<b>Ծախսեր՝</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
	այդ թվում՝		
1	Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ		0.0
2	Հումք, նյութեր, պահեստամասեր		0.0
3	Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ		0.0
4	Վարձակալական ծառայության		0.0
5	Գործուղման ծախսեր		0.0
6	Կապի ծառայություններ		0.0
7	Այլ կազմակերպությունների և անձանց կողմից կատարված աշխատանքների և ծառայությունների վճարներ, այդ թվում		0.0
8	Բանկային ծառայություններ		0.0
9	Գրասենյակային ծախսեր		0.0
10	Կոմունալ ոլորտի ծախսեր		0.0
11	Այլ ծախսեր		0.0
<b>III</b>	<b>Շահույթ (վնաս)</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
<b>IV</b>	<b>Միավոր ծառայության ինքնարժեք</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
<b>IV</b>	<b>Ընդամենը</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>

Ձև 2

(Ներկայացվում է յուրաքանչյուր ամսվա 15-ին և յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը)

Ամիս/ամսաթիվ

Դիմորդների թիվ				
Բնակության վայր	Ցածր մակարդակ	Միջին մակարդակ	Բարձր մակարդակ	Ընդհանուր
Երևան				
Արագածոտն				
Արարատ				
Արմավիր				
Շիրակ				
Գեղարքունիք				
Լոռի				
Կոտայք				
Սյունիք				
Վայոց ձոր				
Տավուշ				
Ընդհանուր				
	Երևան			Մարզեր
Ընդունելության փուլն անցած մասնակիցների թիվ				
<b>Բնության անցկացման ամսաթիվ</b> (նշել միայն վերջին շաբաթվա ընթացքում իրականացված քնության ամսաթիվը)				Ընդհանուր
Բնակության վայր	Ցածր մակարդակ	Միջին մակարդակ	Բարձր մակարդակ	
Երևան				
Արագածոտն				
Արարատ				
Արմավիր				
Շիրակ				
Գեղարքունիք				
Լոռի				
Կոտայք				
Սյունիք				
Վայոց ձոր				
Տավուշ				
Ընդհանուր				
	Երևան			Մարզեր
Այս պահին սովորում են				
Բնակության վայր	Ցածր մակարդակ	Միջին մակարդակ	Բարձր մակարդակ	Ընդհանուր
Երևան				
Արագածոտն				
Արարատ				
Արմավիր				
Շիրակ				

Գեղարքունիք				
Լոռի				
Կոտայք				
Սյունիք				
Վայոց ձոր				
Տավուշ				
Ընդհանուր				
	<i>Երևան</i>		<i>Մարզեր</i>	
<b>Շրջանավարտների ընդհանուր թիվ</b>				
Բնակության վայր	Ցածր մակարդակ	Միջին մակարդակ	Բարձր մակարդակ	Ընդհանուր
Երևան				
Արագածոտն				
Արարատ				
Արմավիր				
Շիրակ				
Գեղարքունիք				
Լոռի				
Կոտայք				
Սյունիք				
Վայոց ձոր				
Տավուշ				
Ընդհանուր				
	<i>Երևան</i>		<i>Մարզեր</i>	
<b>Արցախյան պատերազմների մասնակիցների թիվ</b>				
Բնակության վայր	Դիմորդների թիվ	Այս պահին սովորում են	Ավարտել են	
Երևան				
Արագածոտն				
Արարատ				
Արմավիր				
Շիրակ				
Գեղարքունիք				
Լոռի				
Կոտայք				
Սյունիք				
Վայոց ձոր				
Տավուշ				
Ընդհանուր	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	

Ունիվերսալ անվտանգ կատարողական հաշվետվությունում

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Սեռ	ՀՀՀ տվյալներ	Գրանցման հասցե	Հեռ.	Էլ. փոստ	Կրթություն/ո ւսումնական հաստատությ ան անվանում	Աշխատավ այր	Դասընթացին դիմելու ամսաթիվ	Դասընթացի սկիզբ	Դասընթացի ավարտ	Այլ նշումներ
1												
2												
3												
4												
5												

Հ/Հ	Անուն, Ազգանուն	ՀՀՀ տվյալներ	Գրանցման հասցե	Պետական համաֆինանսավորման տրևա՝ ըստ դասընթացի ավարտից հետո ներկայացված աշխատանքային նոր պայմանագրի	Պետության կողմից ֆինանսավորվող գումարի չափ	Դասընթացի ավարտից հետո կնքված նոր պայմանագրի ամսաթիվ	Ուսանողի կողմից սրվող գումարի չափ
1							
2							
3							
4							
5							

Պահանջվող մասնագիտություններ	Մասնագիտական մակարդակ	Աշխատավարձի չափ	Պահանջվող մասնագետների թիվ	Դարձնթացի մասնակցի Ա.Ա.Հ
				---
				---
				---
				---
				---

Կրթական կազմակերպություն (անվանումը)  
 ՀՎՀՀ  
 Հասցե՝  
 Տնօրեն՝

Գործատու կազմակերպություն (անվանումը)  
 ՀՎՀՀ  
 Հասցե՝  
 Տնօրեն՝

Ձև 5

Պահանջվող մասնագիտություններ	Մասնագիտական մակարդակ	Աշխատավարձի չափ	Պահանջվող մասնագետների թիվ	Դասընթացի մասնակցի Ա.Ա.Հ	Աշխատող մասնագետի մասնագիտացում Բ	Աշխատող մասնագետի մասնագիտական մակարդակը

Կրթական Կազմակերպություն (անվանումը)

- <վ><
- <ա>ցն՝
- Տնօրեն՝

Գործատու Կազմակերպություն (անվանումը)

- <վ><
- <ա>ցն՝
- Տնօրեն՝

**«ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ-ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՃԱՄԲԱՐ (TECH-CAMP) 2023»**

**ԾՐԱԳՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԲԱՂԱԴՐԻՉ**

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1. Ժամանակակից աշխարհում օրեցօր ավելի են կարևորվում տեխնոլոգիական գիտելիքները և յուրաքանչյուր քնազավառ ուղղակի կամ անուղղակի կապվում է տեխնոլոգիաների հետ:

Այսօր գրեթե հնարավոր չէ պատկերացնել կենսագործունեության որևէ ոլորտ, որը անմասն մնա տեխնոլոգիաների կիրառումից:

Միևնույն ժամանակ թվային տեխնոլոգիաների կիրառումը մեծապես կարող է նպաստել անձի և հասարակության զարգացմանը, իսկ դրանց ճիշտ կիրառման չիմացությունը, որպես կանոն հանգեցնում է անցանկալի հետևանքների:

Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական գրագիտությունը սերտորեն կապված է նաև պետական կառավարման և ազգային անվտանգության հարցերի հետ: Այս համատեքստում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց կարևոր է հասարակության լայն շերտերին իրազեկել տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով սպառնացող վտանգների մասին՝ բարձրացնելով նրանց գրագիտության և անվտանգության ապահովման մակարդակը:

2. Արձանագրելով Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին թվային հանցագործությունների և տվյալների արտահոսքի կատարման դեպքերը՝ անհրաժեշտ է նշել, որ հույժ կարևոր է իրազեկել գրագետ օգտագործել «խելացի» սարքավորումները, սոցիալական ցանցերը և ծրագրային ապահովումները:

3. Տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ հասարակության շրջանում գրագիտության բարձրացումը, անհատի կողմից թվային տեխնոլոգիաների պատասխանատու օգտագործումը, էթիկական և անվտանգության նորմերի մասին հասարակության լայն շերտերին



իրազեկումը նախատեսված է մի շարք ռազմավարական փաստաթղթերով, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363 - Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրով (թվայնացման բաժին), Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների միջոցառումների ծրագրի՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործունեության միջոցառումներով (21-րդ և 28-րդ նպատակներ): Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի թիվ 183-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի թվայնացման 2021-2025 թվականների ռազմավարությամբ (այսուհետ՝ Ռազմավարություն) նույնպես անդրադարձ է կատարվում թվային գրագիտության ուսուցողական ծրագրերին, իսկ թվայնացման հիմնարար պայմաններում նշվում է, որ. **«նախատեսվում է իրականացնել համալիր կրթական ծրագրեր հանրության բոլոր տարիքային և սոցիալական խմբերի, Հայաստանի թվային փոխակերպման օրակարգը իրականություն դարձնելու, ապագայի տնտեսության մարտահրավերներին և կիրճանակության զարգացող պահանջներին համապատասխանելու համար»:**

4. «Տեխնոլոգիական ճամբար (TECH-CAMP) 2023» ուսումնաճանաչողական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մշակումն ու իրականացումը հնարավորություն կտա կյանքի կոչել վերը նշված ռազմավարական փաստաթղթերով նախատեսված նպատակները:

## 2. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

5. Ծրագրի նպատակն է համապատասխան կրթական ռեսուրսների մշակմամբ և կիրառմամբ ծանոթացնել շահառուներին տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին:

6. Ծրագրի նպատակներից է նաև՝

- 1) Հայաստանի Հանրապետությունում թվային գրագիտության ցուցանիշի աճը:
- 2) Պատրաստել հասարակությանը՝ զինելով թվային հմտություններով ու վերջինիս դարձնելով ավելի ճկուն, ապագայի մասնագիտություններին և տնտեսության պահանջներին ավելի համապատասխան:
- 3) Մեծացնել աշխատուժի և տնտեսության մրցունակությունը՝ հանրային կրթության ոլորտում և առօրյա կյանքում անհատի կողմից թվային տեխնոլոգիաների պատասխանատու օգտագործմամբ,

էթիկական և անվտանգության նորմերի մասին հասարակության լայն շերտերի իրազեկմամբ, համապատասխան կրթական ռեսուրսների մշակմամբ և դրանց կիրառմամբ:

4) Բարելավել թվային հմտություններին տիրապետող քաղաքացիների կյանքի որակը: Թվային հմտությունները քաղաքացիներին թույլ կտան ավելի արդյունավետ կազմակերպել իրենց շփումը պետական գերատեսչությունների և տնտեսվարողների հետ, ինչպես նաև օգտվել թվային ծառայություններից և արտադրանքներից: Թվային հմտություններին տիրապետող աշխատուժը կմասնակցի տնտեսության մեջ նոր տեխնոլոգիական լուծումների ներդրմանը՝ նպաստելով ՀՆԱ-ի աճին և որակական զարգացմանը:

### 3. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

7. Ծրագրի իրականացման նպատակով կազմակերպված քննարկումների արդյունքում, հստակեցվել է Ծրագրի թիրախային խումբը՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ավագ դպրոցի (կրթական ծրագրի 4-րդ աստիճան) սովորողները:

8. Որպես Ծրագրի շահառուներ դիտարկվում են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների բնակավայրերին սոցիալական աջակցության տրամադրման նպատակով փոխհատուցման կարգը, ժամկետները, չափորոշիչները և աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 21-ի N 271-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշմամբ սահմանված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ուսումնական հաստատությունների ավագ դպրոցներում սովորողները:

2023 թվականին պիլոտային ծրագրի իրականացման նպատակով ընտրվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերը:

Հաջորդիվ ծրագիրը նախատեսվում է իրականացնել ՀՀ բոլոր մարզերի սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերում:

9. Ծրագիրը նախատեսվում է իրականացնել ամառային երիտասարդական ճամբարի ձևաչափով՝ հիմք ընդունելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից իրականացված «Տիեզերական ճամբար 2022» (SpaceCamp 2022) ծրագրի հաջողված փորձը:

10. Ծրագիրը նպատակ ունի մեկշաբաթյա դասընթացների միջոցով օժանդակել պատանիներին՝ թվային հմտությունների, համակարգչային բազային գիտելիքների, մասնագիտական կողմնորոշման և մի շարք այլ բնագավառներում գիտելիքների հարստացման հարցում:

11. Մասնակիցների ընտրությունը կիրականացվի հանձնաժողովի կողմից՝ դիմորդների մոտիվացիոն նամակների գնահատման միջոցով:

12. Գնահատման արդյունքներից կախված կընտրվեն առավելագույնը 100 պատանիներ:

13. Դասընթացները ընդգրկելու են հետևյալ ուղղությունները՝

- MS Office (Word, Excel, Power Point)
- Էլ. Փոստի կառավարում
- Google գործիքակազմի օգտագործում
- Տեսազանգեր
- Սոցիալական լրատվամիջոցների կառավարում
- Համակարգչի «Help» ֆունկցիայից օգտվելու հմտություններ
- Համակարգչային ծրագրերի անվճար ներբեռնում և թարմացում
- Վիրուսային ծրագրերից պաշտպանվելու հմտություններ
- Համակարգչային օժանդակ սարքերի միացում
- Կոշտ սկավառակների «դեֆրագմենտացիա»
- «Windows» օպերացիոն համակարգի տեղադրում և չեղարկում
- Դիզայներական ծրագրերից օգտվելու բազային գիտելիքներ (Picsart, 3D MAX և այլ)
- Ծանոթացում բարձր տեխնոլոգիական սարքավորումներին

14. Դասընթացի ավարտին մասնակիցները կներկայացնեն սահիկահանդես դասընթացի արդյունքում ստացված գիտելիքների և հմտությունների վերաբերյալ:

15. Ծրագրի շրջանակում Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության համակարգմամբ կստեղծվի միասնական կայք, որտեղ կտեղադրվեն դասընթացների նյութերը, տեսահոլովակներ համակարգչային բազային գիտելիքների և թվային հմտությունների ուսուցման վերաբերյալ, ինչպես նաև նյութեր՝ թվային սարքերից անվտանգ օգտվելու կանոնների մասին:

#### 4. ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՆ

16. 2023 թվականի Ծրագրի իրականացման գնահատված արժեքը կկազմի 30,0 մլն Հայաստանի Հանրապետության դրամ: Ծրագրի հետագա տարիների ֆինանսավորումը կիրականացվի յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակներում իրականացված քննարկումների արդյունքում՝ առաջիկա տարվա պետական բյուջեով ծրագրի համար նախատեսված գումարի շրջանակում:

17. Ծրագրի միջոցառումները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Միջոցառումը	Գինը/ՀՀ դրամ
Կայքի պատրաստում	2.500.000
Ծրագրի շրջանակում մրցույթի հայտարարման ծախսեր, այդ թվում՝ <ul style="list-style-type: none"> <li>• Մասնակիցների տեղափոխում</li> <li>• Գիշերակաց</li> <li>• Սնունդ</li> <li>• Դասերի և քննարկումների կազմակերպում</li> <li>• Անհրաժեշտ սարքավորումներով ապահովում</li> <li>• Ընթացիկ միջոցառումներ</li> <li>• Հրաժեշտի երեկո</li> </ul>	27.500.000